Կարծիք

Նարինե Մնացականի Մովսեսյանի «1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հուշագրություններում և սփյուռքահայ ու խորհրդահայ պատմագիտության գնահատմամբ» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

1920 թ. աշնանը բռնկված թուրք-հայկական պատերազմը հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմության ողբերգական էջերից մեկն է: Պարտվելով այս պատերազմում Հայաստանը կորցրեց իր տարածքների շուրջ կեսը: Այս պատերազմը ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար, քանզի կանխորոշվեց Հայաստանի Հանրապետության անկումը: Հայ պատմագրության մեջ այս հիմնահարցը միանշանակ գնահատական չի ստացել, քանզի խորհրդահայ, սփյուռքի և անկախության շրջանի հայ պատմագրության ներկայացուցիչները տարբեր կերպ են ներկայացրել ու գնահատել թուրք-հայկական պատերազմին վերաբերող մի շարք խնդիրներ:

Անշուշտ, թուրք-հայկական պատերազմի պատմությունը և դրա դասերը ուսանելի և կարևոր են ոչ միայն պատմագիտական, այլև արդի քաղաքական իրավիճակի անաչառ գնահատման տեսանկյունից: Ցավոք, պատմությունը կրկնվելու միտում ունի, ինչի ականատեսը եղանք 2020 թվականին, երբ կարծես զարմանալի զուգադիպությամբ, ընդամենը մեկ օրվա տարբերությամբ, 1920 թ. թուրք-հայկական աղետալի պատերազմից ուղիղ մեկ դար անց, աշխարհի քար անտարբերության պայմաններում սկսվեց Արցախյան պատերազմը, որին ակտիվորեն ներգրավված էր նաև Թուրքիան: Երկու դեպքում էլ, առանց նախապես պատերազմ հայտարարելու, նախահարձակ է եղել թշնամին:

Չնայած 100 տարուց ավելի է, որ գրվում է այս պատերազմի վերաբերյալ՝ սկսած օրվա պետական, քաղաքական ու ռազմական բնագավառի ներկայացուցիչների հուշերից, ավարտած անկախության շրջանի պատմաբանների աշխատություններով, բայց դեռևս թեմային վերաբերող մի շարք հիմնահարցեր կան, որոնց վերաբերյալ հայ պատմագրության մեջ միանշանակ տեսակետ չկա:

Նարինե Մովսեսյանի ներկայացրած թեկնածուական ատենախոսությունն (197 համակարգչային էջ) ունի կուռ կառուցվածք, գրագետ և սահուն լեզվառճական շարադրանք: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (ինը ենթագլուխներով), եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ատենախոսի նպատակն է հանդիսացել արխիվային նորահայտ փաստաթղթերի, հրատարակված վավերագրերի, հուշագրությունների, գրականության և մամուլի հրապարակումների ուսումնասիրությամբ ներկայացնել թուրք-հայկական պատերազմի պատմության պատմագրությունը: Ատենախոսն իր առջև խնդիր է դրել ներկայացնել պատերազմին նախորդող ժամանակաշրջանի կարևոր ռազմաքաղաքական իրադարձությունների, դրանց հետևանքների, պատերազմի սկզբնավորման, ընթացքի ու ավարտական փուլի լուսաբանումը 1920 թ. տեղի ունեցած դեպքերի և իրադարձությունների ժամանակակիցների հուշերում, ինչպես նաև սփյուռքահայ ու խորհրդահայ պատմագիտության մեջ:

Հարկ է նշել, որ արդիականության տեսակետից տեղին և դիպուկ է ընտրված ատենախոսության թեման, որը գալիս է ավելի քան մեկդարյա հեռվից՝ քննելու և արժևորելու հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող՝ թուրք-հայկական երկրորդ պատերազմի հիմնահարցի շուրջ ստեղծված գրականության պատմագիտական արժեքն ու նշանակությունը:

Ուսումնասիրությունում կիրառվել են հուշագրությունների, սփյուռքահայ ու խորհրդահայ պատմաբանների աշխատությունների, ժամանակի մամուլի, արխիվային նյութերի համադրման, համեմատման, վերլուծության, ինչպես նաև պատմաքննական մեթոդաբանությունը:

Ներածության մեջ ներկայացված են ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, հետազոտության առարկան, մեթոդաբանությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, թեմայի աղբյուրագիտական հենքն ու ուսումնասիրվածության աստիճանը: Վերոնշյալ խնդիրներն աշխատանքում լուսաբանված են բավարար մակարդակով: Պաշտպանության ներկայացված թեկնածուական

ատենախոսությունը գրագետ շարադրված հաջող աշխատանք է, որտեղ օգտագործվել են թեմային վերաբերող հիմնական հուշագրություններն ու աշխատությունները:

Անշուշտ, ատենախոսն իրավացի է գտնվել, երբ թուրք-հայկական պատերազմի հիմնահարցի շուրջ ձևավորված պատմագիտական գրականության վերլուծությունը ներկայացնելիս հեղինակներին բաժանել է երեք խմբի՝ քննելով դեպքերի և իրադարձությունների ժամանակակիցների հուշերը, Սփյուռքի և խորհրդային շրջանի հայ հեղինակների աշխատությունները: Բնական է, որ ծավալային առումով ամենամեծ տեղը պետք է հատկացվեր խորհրդային տարիներին ստեղծված գրականության քննությանն ու վերլուծությանը: Գովելի է, որ հեղինակը խորհրդային ժամանակաշրջանն էլ իր հերթին բաժանել է երեք շրջափուլերի՝ հաշվի առնելով տվյալ շրջանի առանձնահատկությունները, որոնք իրենց դրոշմն են թողել պատմաքաղաքական շատ հարցերի՝ այդ թվում թուրք-հայկական պատերազմի մի շարք հիմնահարցերի լուսաբանման վրա: Խորհրդահայ պատմաբանների սուբյեկտիվ մոտեցումներին, կուսակցական ու քաղաքական դիրքորոշումներով պայմանավորված գնահատականներին շատ դիպուկ բնորոշումներ է տվել ատենախոսը: Հիմնավոր ու տեղին քննադատում է խորհրդային շրջանի պատմաբաններ Ս. Կարապետյանի, Ե. Սարգսյանի, Ա. Մնացականյանի, Մ. Արզումանյանի և մյուսների գլխիվայր շրջած փաստարկ մեկնաբանությունները թուրք-հայկական պատերազմի առնչությամբ: Հիմնավոր է հեղինակի եզրահանգումն այն մասին, որ խորհրդահայ հեղինակները պատերազմի ընթացքի գնահատականներում հիմնականում անդրադարձել են կռիվների ժամանակ և հետո դաշնակցական կառավարության անարդյունավետ գործունեությանը՝ դաշնակիցներ գտնելու հարցում՝ չպարզաբանելով պատերազմի ընթացքն ու ռազմական իրադարձությունները, այլ ուշադրություն դարձնելով միայն պարտության մեղավորներ փնտրելուն: Տեղին է նկատել ատենախոսը, որ խորհրդահայ պատմաբանները գրեթե չեն անդրադարձել թուրքերի հրահրած ռազմական գործողություններին Նախիջևանում, Արցախ-Զանգեզուրում և դրանք չեն որակել որպես պատերազմի նախնական փուլ: Ի դեպ, խորհրդահայ պատմաբանները գրեթե միաձայն շրջանցել են նաև խորհրդա-քեմալական մերձեցման ու դաշինքի հանգամանքը: Ատենախոսը ճիշտ է նկատում, որ անգամ դեպքերի և իրադարձությունների ժամաակակից հեղինակների

մոտ միասնական կարծիք չկա թուրք-հայկական պատերազմի սկսման ստույգ օրվա վերաբերյալ:

Հարկ է նշել, որ ատենախոսության բոլոր գլուխները շարադրված են նույն կերպ՝ քննական ու քննադատական ոճով, գիտական բարեխղճությամբ: Ատենախոսին հաջողվել է պատմաքննական, վերլուծական մոտեցմամբ, լրացուցիչ թարմ փաստավավերագիր նյութերի շրջանառմամբ, հիմնավոր պատասխաններ տալ հայ պատմագրության մեջ մինչ օրս շրջանառվող տարակարծություններին՝ դրանք խմբավորել, համակարգել, քննադատել, վերլուծել, գնահատել ու արժևորել: Ատենախոսության արժանիքներից է նաև այն, որ ատենախոսության ենթագլուխներն ավարտվում են ընդհանրացումներով ու ատենախոսի սեփական ամփոփումներով:

Եզրակացություններում հեղինակը հանրագումարի է բերել ատենախոսության առանցքային դրույթները և հիմնավոր եզրահանգումներով ամփոփել է ուսումնասիրության հիմնական արդյունքները:

Գիտական պատշաճ մակարդակով է կազմված ատենախոսության օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը:

Հաջողված և գիտական նորույթ պարունակող այս աշխատանքը, բնականաբար զերծ չէ նաև որոշ թերություններից ու վրիպակներից, ուստի ցանկանում ենք մեր դրական կարծիքին զուգահեռ ներկայացնել որոշ նկատառումներ և առաջարկներ, որոնք կարծում ենք օգտակար կլինեն ատենախոսին աշխատանքը որպես մենագրություն հրատարակելու դեպքում.

1. Ատենախոսության մեջ նկատելի են զգալի թվով տեխնիկական վրիպակներ, օրինակ՝ էջ 110-ում Մուստաֆա Քեմալի անունը գրված է փոքրատառ, էջ 139-ում Խալիլ բեյի փոխարեն գրված է «Խալիդ բեյ», Էրզրումի կոնգրեսը թվագրվում է 1920 թվականով, մինչդեռ պետք է լիներ 1919 թ. հուլիս-օգոստոս (էջ 144), էջ 140-ում սփյուռքահայ հեղինակ Վահե Արծրունու աշխատության վերնագիրը գրված է կիսատ՝ «Հայ-տաճկական պատերազմը», պետք է լիներ՝ «Հայ-տաճկական պատերազմը. Հայ սպայութիւնը. Շատախ» և այլն: Շարադրանքում հանդիպում ենք «քեմալա-ռուսական համագործակցություն» (էջ 54), «թուրք-բոլշևիկյան դաշինք» (էջ 150) ձևակերպումներ, կարծում ենք ճիշտ կլիներ գրել «քեմալա-բոլշևիկյան դաշինք»:

2. Որոշ ձևակերպումների հետ կապված ատենախոսի շարադրանքում միօրինակություն չկա, օրինակ՝ աշխատանքի յուրաքանչյուր գլխի առաջին ենթավերնագրում հստակ նշված է «իրադարձությունների լուսաբանումը կամ գնահատականը *ժամանակակիցների* աշխատություններում», իսկ ահա ներածության մեջ ատենախոսը գրում է. «Առաջին անգամ փորձ է արվում ներկայացնել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության գնահատականը՝ *ժամանակի*, խորհրդային և սփյուռքահայ պատմագիտության տեսանկյունից»: Ի դեպ, հեղինակի այս մտքի հետ էլ միանշանակ համաձայն չենք, քանի որ, եթե թուրք-հայկական պատերազմի հիմնահարցի գնահատականը սփյուռքահայ պատմագիտության մեջ և հուշագրություններում իսկապես առաջին անգամ է լուսաբանվում, ապա նույնը խորհրդահայ պատմագիտության մասին ասել չենք կարող, որովհետև դրան իր դոկտորական ատենախոսությունում Ս. Քառյանն անդրադարձել է, որը 2003 թ. լույս է տեսել որպես մենագրություն[1]:
3. Հաջորդ ձևակերպումը, որին դարձյալ տեքստում հանդիպում ենք երկու ձևով, դա «խորհրդային պատմագիտություն» (էջ 152, 162, 163, 179, 183, 184) և «խորհրդահայ պատմագիտություն» տարբերակներն են: Մեր կարծիքով ճիշտ կլիներ գրվեր «խորհրդահայ պատմագիտություն», որովհետև ատենախոսն աշխատանքում քննության է ենթարկել խորհրդահայ հեղինակների գործերը:
4. Կարծում ենք՝ անհաջող է նաև «մինչխորհրդային պատմագիտություն» ձևակերպումը, էջ 167-ում հեղինակը գրում է. «Պատերազմի ավարտական փուլի լուսաբանման հարցում *մինչխորհրդային պատմագիտությունն* անխուսափելիորեն անդրադարձել է Հայաստանի խորհրդայնացման նախադրյալներին և թուրք-ռուսական համաձայնություններին»: Կարծում ենք՝ կարելի էր գրել ոչ թե «մինչխորհրդային պատմագիտությունն է անդրադարձել», այլ՝ «դեպքերի և իրադարձությունների ժամանակակիցները»: Նմանատիպ մի ձևակերպման էլ հանդիպում ենք էջ 53-ում. «Այսպիսով, *անկախության ժամանակաշրջանի պատմագիտությունը* բավականին հիմնավորապես անդրադարձել է 1920 թ. թուրք-

[1] Տես Քառյան Ս., Հայաստանի առաջին Հանրապետության պատմության պատմագրություն, Երևան, 2003, էջ 124-166:

հայկական պատերազմի նախօրեին տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակին»: էջ 139-ում նույնպես նշվում է, որ «***Առաջին հանրապետության ժամանակահատվածի պատմագիտությունն*** ընդհանուր առմամբ համակողմանի անդրադարձել է պատերազմական իրադարձություններին»: Մի՞թե Առաջին հանրապետության շրջանում զարգացած էր պատմագիտությունը կամ, պատերազմի արդյունքում կործանվեց Առաջին հանրապետությունը, էլ երբ ու ինչպե՞ս կարող էր պատմագիտությունն անդրադառնալ այդ խնդրին:

5. Չնայած ատենախոսության ներածության մեջ հեղինակը նշում է, որ հաշվի առնելով նյութի ծավալը դրա համար չի անդրադարձել հետխորհրդային կամ անկախության շրջանի պատմագիտության մոտեցումներին, բայց առաջարկում եմ ատենախոսին մենագրություն հրատարակելիս անպայման առանձին ենթագլխով անդրադառնալ նաև հիմնահարցի լուսաբանմանը անկախության շրջանի պատմագիտության մեջ: Ի դեպ, ատենախոսը ներածության մեջ նշում է, որ խորհրդահայ պատմագիտությունը պայմանականորեն բաժանել է երեք փուլի՝ 1. 1920-1940-ական, 2. 1950-1960-ական, 3. 1970-1980-ական, ինչը ողջունելի էր, բայց կարծում ենք առաջին փուլը պիտի նշվեր 1920-1930-ական թթ., քանի որ 1940-ական թվականների առաջին կեսին Խորհրդային Հայաստանում տիրապետող դարձած գիտական աշխատանքների հասկանալի դադարը հաղթահարվեց միայն հետպատերազմյան տարիներին: Սկսած արդեն 1950-ականների կեսերից Հայաստանում նկատելիորեն աշխուժացավ պատմագրությունը: Ուստի, առաջարկում եմ առաջին փուլը համարել 1920-1930-ական թթ.:

6. Ատենախոսը պատերազմի օրվա հարցը համակողմանի քննության առնելուց հետո վերջում պաշտպանում է այն տեսակետը, որ պատերազմը սկսվել է սեպտեմբերի 23-ին (էջ 158): Չնայած անկախության շրջանի պատմագիտության մեջ էլ չկա միանշանակ կարծիք այս հարցի վերաբերյալ, բայց մեր կարծիքով թուրքագետ, ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանը[2], պրոֆեսոր Ա. Հակոբյանը[3] իրենց վերջին

[2] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալի պայքարը Հայաստանի Հանրապետության դեմ 1919-1921 թթ., Երևան, 2019, էջ 75-76:

[3] Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը 1920 թ., Երևան, 2022, էջ 186-212:

աշխատություններում նորահայտ արխիվային նյութերի, վավերագիր, հուշագիր և այլ փաստագրական նյութերի հիման վրա հիմնավորել են, որ պատերազմն իրոք սկսվել է սեպտեմբերի 28-ին:

7. Կարծում ենք՝ ատենախոսության գիտական արժեքը և պատմության փորձի ու դասերի առումով նշանակությունն ավելի կմեծանար, եթե ատենախոսը 1920 թ. ճակատագրական նշանակություն ունեցած այդ պատերազմի տարբեր հիմնահարցերի պատմագիտական քննությունը պատմական զուգահեռների ձևով անցկացներ նաև մերօրյա իրողությունների ու իրադարձությունների լույսի տակ:
8. Չնայած հեղինակը մեծ թվով պատմագիտական գրականություն է օգտագործել և վերլուծել, այդուհանդերձ, կարծում ենք մենագրություն հրատարակելու ժամանակ չպետք է անտեսվեն Ա. Հովհաննիսյանի[4], Ա. Կարինյանի 1920-ական թթ. հրատարակած աշխատությունները[5], ինչպես նաև սփյուռքահայ հեղինակներ Ա. Բաբայյանի, Հ Գանգրունու և Շ. Նաթալիի աշխատությունները[6]:

Վերը թվարկված բացթողումներն ամենևին չեն ստվերում թեկնածուական ատենախոսությունը: Այն հիմնահարցին նվիրված կարևոր ուսումնասիրություն է, որտեղ համակարգված ներկայացված են խորհրդահայ ու սփյուռքահայ պատմաբանների և

---

[4] Տե՛ս Հովհաննիսյան Ա., Համազգային կրիզիսը (Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ), Յերեվան, Հայպետհրատ, 1926, 30 էջ: Հովհաննիսյան Ա., Գաղութահայ խնդիրներ, Յերեվան, Պետհրատ, 1925, 26 էջ: Հովհաննիսյան Ա., Դաշնակցության առիթով, Մոսկվա, Անհ. հրատ., 1929, 64 էջ: Հովհաննիսյան Ա., Դաշնակցությունը յեվ պատերազմը, Յերեվան, Տրեստի առաջին տպարան, 1924, 24 էջ:

[5] Կարինյան Ա., Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, «Զակկնիգա», 1926, 88 էջ; Իմպերիալիստական պատերազմը յեվ Հայաստանը (փաստեր, դոկումենտներ), Յերևան, 1-ին տրեստի տպ., 1924, 60 էջ; Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, Պետհրատ, 1926, 246 էջ; Հին Թուրքիան և թուրքահայությունը, «Նորք», գիրք 1-2, Երևան, 1926; Նացիոնալիզմի «նոր դիրքերը», Մոսկվա, ՀՍԽՀ պետհրատ, 1929, 64 էջ:

[6] Բաբալեան Ա., Կարսի անկումը, Հայրենիք, Բոստոն, 1923, թ. 12; Մի տարի գերութեան մեջ, Հայրենիք, Բոստոն, 1924, թ. 6: Գանգրունի Հ., Դաշնագիրները դաւեցին հայոց 1918-1923, Պէյրութ, Ararat, 1992, 200 էջ: Նաթալի Շ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապօլի, Մոսկուայի եւ Կարսի), Պէյրութ, «Արարատ», 1957, 130 էջ: Շահան, «Վերստին յաւելուած» Ալեքսանդրապոլի դաշնագրի «ի նչպէսն» ու «ի նչուն» (պաշտօնական վաւերագրերու եւ յուշագրական վկայութիւններու լոյսին տակ), Բոստոն, «Պայքար» տպ., 1955, 144 էջ: Շահան, Ալեքսանդրապօլի դաշնագրէն 1930-ի Կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, Մարսէյլ, «Ա. Արապեան» տպ., 1934, 259 էջ: Շահան, Երևանի համաձայնագիրը, Բոստոն, Անհ. հրատ., 1941, 112 էջ:

հուշագիրների տեսակետերն ու գնահատականները 1920 թ. թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում և սեղմագրում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսությունը գիտական տեսակետից հաջողված գործ է, պարունակում է գիտական նորույթ և համապատասխանում է Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտական թվանիշին և լիովին բավարարում է նշված աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Ուստի, կարծում ենք, որ Նարինե Մովսեսյանը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Կ. Ազատյան

Պ.գ.թ., դոցենտ Ա. Կ. Ազատյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական քարտուղար՝ ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Ս. Աթոյան

12.02.2026